**Արձանագրություն N 2**

**«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԱՊՁԲ-16/6/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան

«01» նոյեմբերի 2016թ. ժ. 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Սեխլեյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Միրզոյան, Ս. Հասրաթյան, Վ. Բոյյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Մանուչարյան

**I. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին**

1. Ընդունել ի գիտություն, որ առաջին և հաջորդաբար տեղեր են զբաղեցրել հետևյալ կազմակերպությունները.

| հ/հ | Անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | Սենտրալ ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ ԵՂՎԱՐԴԻ ԽՃՂ. 108 |
| 2 | Դարֆ ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ Ս.Վրացյան 71շ բն 34 |
| 3 | Հույս-Մոտոր ՍՊԸ | ԷՐԵԲՈՒՆԻ Ջավարյան փ. 12 |
| 4 | ԱՁ Հայկ Գալստյան | ՀՐԱԶԴԱՆ ԿԵՆՏՐՈՆ 84 5 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին.

– համապատասխանում է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

4. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| N | Չափաբաժնի անվանումը | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Սենտրալ ՍՊԸ | Դարֆ ՍՊԸ | Հոյս-Մոտոր ՍՊԸ | ԱՁ Հայկ Գալստյան |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Անվադողեր 1 | <u>112000</u> | 130000 | 136567 | 196000 |
| 2 | Անվադողեր 2 | 165700 | 153333 | 199967 | 222000 |

*ԵԱՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարություններ են ներկայացրել՝

1-ին չափաբաժնի մասով՝ Սենտրալ ՍՊԸ-ն և Դարֆ ՍՊԸ-ն, ինչի հիմքով նշված մասնակիցներն ունեն 15 տոկոս գնային առավելություն:

2-րդ չափաբաժնի մասով բոլոր մասնակիցները ներկայացրել են նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ, ինչի կապակցությամբ բոլոր մասնակիցները հրավիրվում են գների շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա կոմիտեում՝ Արշակունյաց 7 հասցեում, նոյեմբերի 4-ին ժամը 10-ին:

Հանձնաժողովը որոշեց Սենտրալ ՍՊԸ-ից առաջին չափաբաժնի մասով պահանջել հրավերով սահմանված Հավելված 4.1-ով նախատեսված ծեռքբերվելիք ապրանքներն ու դրանց տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

5. Ընդունել ի գիտություն, որ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա նախնական տվյալներով առաջին տեղ է զբաղեցրել հետևյալ մասնակիցը՝

1-ին չափաբաժնի մասով՝ Սենտրալ ՍՊԸ-ն

**2-րդ չափաբաժնի մասով նոյեմբերի 4-ին ժամը 10-ին պետք է տարվեն բանակցություններ**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

8. Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 77-րդ և 78-րդ կետերով սահմանված ժամկետում, հայտերի գնահատման արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

9. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել գնումները համակարգողի կողմից հայտերի գնահատման արձանագրությունները ներկայացնելու օրվան հաջորդող օրը ժ. 15:00-ին, կոմիտեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

10. Էլեկտրոնային եղանակով Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց

հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ ______________ Ն.Սեխլեյան

Անդամներ՝ ______________ Լ.Միրզոյան

______________ Ս.Հասրաթյան

______________ Վ.Բոյան

Քարտուղար՝ ______________ Լ.Մանուչարյան